Հայաստանի Հանրապետություն
Ոռոգման համակարգերի բարելավման ծրագիր (ՈՀԲԾ)
ՎԶՄԲ փոխառության No.8267AM

ՇԱՀԱԳՐԳՌՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ
(ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

«Գեղարդալճի ինքնահոս ոռոգման համակարգի կառուցման շինարարության տեխնիկական վերահսկում» ISEP/QCBS/SW-14/003

Հայաստանի Հանրապետությունը ֆինանսավորում է ստացել Համաշխարհային բանկից՝ **Ոռոգման համակարգերի բարելավման ծրագրի (ՈՀԲԾ)** ծախսերը հոգալու նպատակով և մտադիր է միջոցների մի մասն օգտագործել խորհրդատվական ծառայությունների համար:

Խորհրդատվական ծառայությունների («Ծառայություններ») ընդհանուր նպատակներն են. իրականացնել Գեղարդալճի ինքնահոս ոռոգման համակարգի շինարարության տեխնիկական և որակի վերահսկում շինարարական աշխատանքների նկատմամբ՝
- կկառուցվեն մոտ 29.7կմ երկարությամբ խողովակաշարեր (24.3կմ մետաղական և 5.4կմ ապակեպլաստ (GRP)), որոնց միջոցով ներկայումս մեխանիկական եղանակով ոռոգվող 743 հա հողատարածք կոռոգվի ինքնահոս եղանակով; և
- ջրամբարի վերակառուցում 1մլն ծավալը ավելացնելու համար:

Գեղարդալճի ինքնահոս ոռոգման համակարգի շինարարությունն իրականացվելու է 3 շինարարական լոտերով: Յուրաքանչյուր լոտ ունի իր տևողությունը, և դրանք իրականացվելու են զուգահեռաբար, միմյանցից անկախ:
- **Լոտ 1**-ով նախատեսվում է իրականացնել պատվարի վերակառուցում և օժանդակ կառուցվածքների վերականգնում (Գեղարդալճի պատվարի վերակառուցում, վարարային ջրհեռի հեռացնող ջրանցքի, ոռոգման ջրթողի, մոտեցնող ջրանցքի վերականգնում): Վերակառուցումը պետք է այնպես կազմակերպվի, որ չխոչընդոտի ջրամբարից մատակարարվող հողերի ոռոգմանը: Տևողությունը 24 օրացույցային ամիս է: Այդ ժամանակահատվածում Կապալառուն իրավունք կունենա օգտվել տեխնոլոգիական ընդմիջումներից ջրամբարը լցնելու և ոռոգման սեզոնի ընթացքում, ինչպես նաև շինհրապարակում խիստ ձմեռային պայմանների պատճառով: Հաշվի առնելով ոռոգման սեզոնը, 1-ին լոտով շինարարական աշխատանքները հնարավոր կլինի իրականացնել, փաստորեն, սեպտեմբերի 15-ից մինչև մարտ ներառյալ: Սակայն, քանի որ ջրամբարը գտնվում է 2710 մ բարձրության վրա, դեկտեմբերից մինչև մարտ գործնականում հնարավոր չի լինի մոտենալ շինհրապարակին և իրականացնել շինարարական աշխատանքներ: Այնպես որ, կապալառուն իր տրամադրության տակ կունենա միայն սեպտեմբերից-նոյեմբեր ընկած ժամանակահատվածը: Դրանից դուրս շինարարական աշխատանքներ հնարավոր կլինեն միայն մոտեցնող ջրանցքի և վարարային ջրհեռի հեռացնող ջրանցքի վրա: Շինարարական աշխատանքների լավ կազմակերպման դեպքում բետոնային պարապետի շինարարությունը հնարավոր է այն ժամանակ, երբ ջրամբարում ջրի մակարդակը իջնի պարապետի հիմքից ցածր:
- **Լոտ 2**-ով կկառուցվի մագիստրալային խողովակաշարի ՆԿ0+00-ՆԿ133+00 հատվածը (մագիստրալային խողովակաշարի 13.355 կմ հատվածի կառուցում՝ l=9840մ, d=500մմ պողպատյա խողովակներով և l= 3510մ, d= 500մմ ապակյա մանրաթելային (GRP) խողովակներով): Այս լոտի տևողությունը 12 օրացույցային ամիս է: Այդ ժամանակահատվածում Կապալառուն իրավունք կունենա օգտվել տեխնոլոգիական ընդմիջումից խիստ ձմեռային պայմանների պատճառով, քանի որ շինհրապարակը գտնվում է 2700-2000մ բարձրության վրա:
- **Լոտ 3**-ով կկառուցվի մագիստրալային խողովակաշարի ՆԿ130+00-ՆԿ258+64 հատվածը (մագիստրալային խողովակաշարի 12.711 կմ հատվածի կառուցում՝ l=8390մ, d=500մմ և l=2421մ, d=400մմ պողպատյա խողովակներով և l=1900մ, d= 400մմ GRP խողովակներով) և 3,637 կմ երկարության Գեղադիր-Հացավան ճյուղը (3,637 կմ երկարության Գեղադիր-Հացավան խողովակաշար՝ l=2411մ, d=219մմ և l=1226մ, d=250մմ պողպատյա խողովակներով): Այս լոտի տևողությունը 14 օրացույցային ամիս է: Այս տեղամասերը գտնվում

են 1420-2150մ բարձրությունների վրա, ուստի մագիստրալային խողովակաշարի որոշ հատվածներում հնարավոր է տեխնոլոգիական ընդմիջում ձմեռվա ժամանակահատվածում:

Ակնկալվում է, որ խորհրդատվական ծառայությունները կսկսվեն **2015թ. սեպտեմբերին**: Հանձնարարության ընդհանուր տևողությունը **24 (քսանչորս) ամիս է**՝ պայմանագրի ստորագրման պահից:

Սույնով **«Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը** հրավիրում է իրավասու խորհրդատվական ընկերություններին («խորհրդատուներ») հայտնել իրենց շահագրգռվածությունը ծառայությունների մատուցման համար: Շահագրգիռ խորհրդատուները պետք է ներկայացնեն տեղեկություններ, որոնք ցույց կտան, որ իրենք ունեն պահանջվող որակավորումներ և համապատասխան փորձ ծառայությունները կատարելու համար:

Կարճ ցուցակում ընդգրկվելու չափանիշները հետևյալն են.
(i) **ընկերության ընդհանուր փորձը** *(գործունեության հիմնական տեսակը և փորձը տարիներով);*
(ii) **հանձնարարության ոլորտում ընկերության փորձը** *(փորձը ոլորտում (տարիներ) և վերջին 10 տարիների ընթացքում իրականացրած համանման աշխատանքների թիվը);*
(iii) **ընկերության տեխնիկական և կառավարչական կարողությունները** *(կառավարչական և կազմակերպական կառուցվածք, գրասենյակային և լաբորատոր սարքավորումներ և այլն);*
(iv) **ընկերության փորձը տարածաշրջանում** *(Հայաստան/ԱՊՀ երկրներ)*:

Շահագրգիռ խորհրդատուների ուշադրությունը հրավիրում ենք Համաշխարհային բանկի ուղեցույցների՝ *«Համաշխարհային բանկի փոխառուների կողմից ՎՋՄԲ-ի փոխառությունների և ՄՋԸ-ի վարկերի և դրամաշնորհների շրջանակներում խորհրդատուների ընտրություն և վարձում, Հունվար 2011, վերանայված 2014թ. հուլիսին»* («Խորհրդատուների Ուղեցույցներ»), 1.9 կետի վրա, որով սահմանվում է Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման մասով *(Guidelines: Selection and Employment of Consultants under IBRD Loans and IDA Credits & Grants by World Bank Borrowers, January 2011, revised July 2014):*

Խորհրդատուները կարող են միավորվել այլ ընկերությունները հետ **համատեղ ձեռնարկության (ՀՁ)** կամ **ենթախորհրդատվության** ձևով իրենց որակավորումներն ուժեղացնելու նպատակով *(խնդրում ենք հստակ նշել միավորման կարգավիճակը, օրինակ՝ «Համատեղ ձեռնարկություն» կամ «Ենթախորհրդատու»)*:

Խորհրդատուի ընտրությունն իրականացվելու է **Որակի և Արժեքի Հիման վրա Ընտրության մեթոդով (QCBS)**, որը սահմանվում է Խորհրդատուների Ուղեցույցներում:

Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ ստորև նշված հասցեով աշխատանքային ժամերին՝ **ժ.10:00–17:00 (Երևանի ժամանակով), երկուշաբթի օրվանից մինչև ուրբաթ**:

Շահագրգռվածության հայտը պետք է ներկայացվի **անգլերեն** կամ **հայերեն** լեզվով գրավոր՝ տպված օրինակով կամ էլ. փոստով՝ **Adobe PDF** ձևաչափով ստորև նշված հասցեով՝ **2015թ. մայիսի 13**-ից ոչ ուշ և պետք է հստակ նշվի որպես՝ **«Շահագրգռվածություն հայտնելու հայտ "Գեղարդալճի ինքնահոս ոռոգման համակարգի շինարարության տեխնիկական վերահսկում", ISEP/QCBS/SW-14/003»**:

«Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ
Պրն. Մարտին Չարյան, գնումների մասնագետ
ՀՀ, Երևան 0033, Բաղրամյան փ. 75/44
Հեռ՝ (+37410) 277-943 (ընդունարան); 266-058 (գնումների բաժին)
Էլ. փոստ՝ mcharyan@wsdp.am; cc: skarapetyan@wsdp.am;